

**ՀԵՏՍԱՌՐՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐԱԴԻԳՄԵՐՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԵՐԿԽՈՍՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

*Խաչիկ Գալստյան**

20-րդ դարն իրավամբ կարելի է համարել մարդկության պատմության ամենաարյունոտ ու բռնությամբ լի դարաշրջանը, որն աչքի ընկավ համաշխարհային երկու մեծ պատերազմներով և հարյուրավոր տեղային ու տարածաշրջանային հակամարտություններով: Այդ բախումներն, ընդհանուր առմամբ, հանգեցրին շուրջ հարյուր միլիոնից ավելի մարդկային կորուստների, փախստականների հոծ բազմության, ամայացած տարածաշրջանների ու քայքայված տնտեսությունների: Հարկ է նշել միայն, որ 20-րդ դարում կոնֆլիկտների պատճառով ավելի շատ մարդ է մահացել, քան մարդկության ողջ պատմության ընթացքում: Այդ մասին են վկայում նաև փորձագիտական հաշվարկները: Մասնավորապես, եթե 19-րդ դարի պատերազմներում մարդկային կորուստները կազմել են մոտ 6 միլիոն, ապա 20-րդ դարի ընթացքում դրանց թիվն արդեն հասել է 100 միլիոնի սահմանը [1, c. 46]: Իսկ 20-րդ դարի երկրորդ կեսին միայն հաշվարկվում է շուրջ 300 հակամարտություն, որոնցից 200-ում մշտապես ներգրավված էին զինված ուժեր [2, c. 10]:

ԽՍՀՄ կազմալուծումը և աշխարհի քաղաքական քարտեզից նրա վերացումը հանգեցրին նոր աշխարհաքաղաքական իրողությունների ու դրանով պայմանավորված՝ նոր տեսական հայեցա-

* ԵՊՀ դոցենտ, քաղաքական գիտությունների թեկնածու:

կարգերի առաջացմանը: Մասնավորապես, ԽՍՀՄ կազմալուծումից հետո մեծ էին հույսերը, որ աշխարհը կթևակոխի առավել անվտանգ ու հակամարտություններից զերծ ժամանակաշրջան [3, c. 138-146]: Ֆ.Ֆուկույաման սկիզբ դրեց արևմտյան ազատական ժողովրդավարության մոդելի էյֆորիկ հաղթանակի տեսլականին, ըստ որի՝ ժողովրդավարության հաստատումն ամբողջ աշխարհում անխուսափելի է [4, c. 5]: Ֆ.Ֆուկույամայի կարծիքով՝ ազատական ժողովրդավարության հաղթանակով ավարտվում են պետությունների միջև պատմական հակամարտությունները, քանի որ ազատական կացութաձևի հիմնարար ոչ ռազմատենչությունն ակնհայտ է թվում, հատկապես երբ դիտարկում ենք նման կացութաձև ունեցող պետությունների միջև ձևավորված անսովոր խաղաղ բնույթ կրող հարաբերությունները [4, c. 28]: Հետևելով գերմանական փիլիսոփայական մտքին բնորոշ պատմության ունիվերսալ ընկալման հեգելյան ավանդությանը, շարունակելով «պատմության ավարտի» կանտյան դիսկուրսը՝ Ֆ.Ֆուկույաման «պատմության ավարտը» տեսնում է ամբողջ աշխարհում, թեկուզև աստիճանական, ազատական ժողովրդավարության պարադիգմի տարածման մեջ:

Մեծ հաշվով, ամերիկացի գիտնականը բավական «ջերմեռանդությամբ» է խոսում տեխնոգեն հասարակության, գիտության առաջընթացի ու պատերազմների «կառուցողական» դերակատարման հարցերի մասին: Մասնավորապես, Ֆ.Ֆուկույաման նշում է առաջին միջոցներից մեկը, որով ժամանակակից գիտությունը կարող է ծնել պատմական փոփոխություններ, այն է՝ ռազմական մրցակցությունը [4, c. 221]: Գիտությունը Վճռորոշ ռազմական առավելություն է տալիս այն հասարակություններին, որոնք կարողանում են առավել արդյունավետ մշակել, արտադրել և ներդնել նոր տեխնոլոգիաներ: «Ու, որքան էլ պարադոքսալ է հնչում, բայց հենց ժողովուրդների միջև անընդհատ պատերազմներն ու սպառազինությունների մրցավազքն են հանդես գալիս հզոր ունիֆիկատորների դերում: Նույնիսկ, եթե պա-

տերազմը երբեմն հանգեցնում է պետության կործանման, այնուամենայնիվ, այն ստիպում է ընդունել ժամանակակից տեխնոլոգիական քաղաքակրթությունն ու նրան սպասարկող հասարակական կառույցները» [4, c. 222-223]: Գիտության ընձեռած առավելությունն էր, որ թույլ տվեց եվրոպացիներին 18 և 19-րդ դարերի ընթացքում նվաճել երրորդ աշխարհի գրեթե բոլոր երկրները: «Ձուլուսների նիզակները չէին կարող դիմակայել բրիտանական հրացաններին, որքան էլ որ քաջ լինեին գուլուսները» [4, c. 215]: Նման իլյուստրատիվ կերպով է ներկայացնում Ֆ.Ֆուկույաման գիտության առաջընթացն ու Արևմուտքի նվաճողականությունը՝ միաժամանակ ընդունելով, որ այդ նույն գիտության դիֆուզիան Եվրոպայից դեպի այլ երկրներ հնարավորություն է տալիս վերջիններիս արդեն 20-րդ դարում վերականգնել իրենց ինքնիշխանությունը: Մեկ այլ տեղ հեղինակը նշում է, որ պատերազմի հնարավորությունը մեծ ուժ է, որը ստիպում է հասարակությանը գնալ ռացիոնալիզմի և ստեղծել միասնական սոցիալական կառույցներ տարբեր մշակույթներում... և ոչ թե համագործակցությունը, այլ կոնֆլիկտն է ստիպում մարդկանց միավորվել որոշակի հանրության շրջանակներում՝ հետագայում էլ ավելի կատարելագործելով այդ հանրույթների ներուժը [4, c. 228]:

Այստեղից կարելի է հետևություն անել, որ Ֆ.Ֆուկույամայի առաջ քաշած գաղափարները որոշակի իմաստով հանդիսանում են պատերազմների արդարացման Մալթուսյան ավանդության շարունակությունը և հենվում են կոնֆլիկտների տեսության մեջ հայտնի «գրոյական գումարով» խաղային ելքերի պրակտիկայի վրա:

Մառը պատերազմի ավարտից հետո ձևավորված հաջորդ տեսական հայեցակարգը, որը բավական մեծ արձագանք ունեցավ հասարակագիտական շրջանակներում, պատկանում է մեկ այլ հայտնի ամերիկյան քաղաքագետի՝ Սամուել Հանթինգտոնին՝ իր «քաղաքակրթությունների բախման» հավակնոտ պարադիգմով: Ս.Հանթինգտոնը նույնպես, Ֆ.Ֆուկույամայի նման, փորձում է տալ հետսառըպատե-

րազմյան աշխարհակարգի նոր ուրվագծերը, ըստ որի՝ Սառը պատերազմի ավարտից հետո մարդկանց միջև առկա առավել կարևոր տարբերությունները ոչ թե գաղափարական, քաղաքական կամ տնտեսական են, այլ կրում են մշակութային կամ քաղաքակրթական բնույթ, ու դրա հետ կապված էլ ապագայի գլոբալ, մասշտաբային ու վտանգավոր հակամարտությունները կընթանան ոչ թե սոցիալական դասակարգերի, հարուստների ու աղքատների, այլ տարբեր քաղաքակրթությունների պատկանող ժողովուրդների միջև [5, c. 17, 24]: Քաղաքակրթությունների բախման հավանականությունն առաջ քաշելով՝ Ս.Հանթինգտոնը միաժամանակ զգուշավոր մոտեցում է ցուցաբերում հետսառըպատերազմյան աշխարհակարգը միայն տարբեր քաղաքակրթությունների միջև ընթացող պայքարի ու բախման տեսքով նկարագրելով: Սակայն, ըստ նրա, պատմական բոլոր ժամանակաշրջաններում էլ տարբեր իրավիճակների գնահատման ու վերլուծման համար կիրառվում են իրականության պարզեցված պատկերներ, քարտեզներ, ինչ-որ տեսություններ, մոդելներ, պարադիգմեր [5, c. 27]: Քննադատելով Ֆ.Ֆուկույամայի առաջ քաշած ազատական ժողովրդավարական մոդելի հաղթարշավի վրա կառուցված մեկ ներդաշնակ աշխարհի հաստատման հայեցակարգը՝ Ս.Հանթինգտոնը համարում էր, որ «ներդաշնակ աշխարհի» պարադիգմը չափից դուրս կտրված է իրականությունից, որպեսզի հետսառըպատերազմյան աշխարհում օգտակար կողմնորոշման հիմք հանդիսանա [5, c. 32]: Բացի այդ, ըստ Ս.Հանթինգտոնի, պատմական կտրվածքով Արևմուտքի հաղթարշավը պայմանավորված էր ոչ այնքան արժեքների կամ կառավարման ավելի քաղաքակիրթ սկզբունքներով, որքան բոլորովին այլ հանգամանքով: «Արևմուտքը նվաճեց աշխարհը ոչ թե գաղափարների, արժեքների կամ կրոնական գործոնի գերակայության պատճառով, այլ ավելի շուտ կազմակերպված բռնության կիրառման առավելության շնորհիվ: Արևմուտքի բնակիչները հաճախ են մոռանում այդ հանգամանքը, մինչդեռ ոչ Արևմուտքի բնակիչները երբեք չեն մոռանա այդ փաստը» [5, c. 66]:

Տեսական իմաստավորման ու գործնական կիրառելիության առումով, ինչպես նշում է Ս.Հանթինգտոնը, որոշակի խնդիրներ են հարուցում նաև «երկու աշխարհների» պարադիգմերը, ինչպիսիք են, օրինակ՝ Արևմուտք-Արևելք, Հյուսիս-Հարավ, Կենտրոն-Ծայրամաս հակադրությունները, որոնք ևս նպատակ ունեն տալու մեզ շրջապատող իրականության պարզեցված պատկերը: Սակայն, ըստ Ս.Հանթինգտոնի, աշխարհն ավելի բարդ է, և բավարար չէ զուտ տնտեսական առումով այն բաժանել Հյուսիսի և Հարավի, կամ մշակութային առումով՝ Արևմուտքի և Արևելքի [5, c. 34]: Իհարկե, կարելի է այս դեպքում առաջնորդվել նաև քաղաքական ռեալիզմի տեսությամբ, ըստ որի՝ համաշխարհային քաղաքականության հիմնական դերակատարներն առանձին պետություններն են, որոնք առաջնորդվում են սեփական շահերի առավելագույն բավարարման մղումներով՝ փոխադարձ զսպումների և ուժի ցուցադրության միջոցով: Այս մոտեցումը նույնպես, ըստ Ս.Հանթինգտոնի, որոշակի սահմանափակվածություն է կրում և երբեմն չի կարողանում զուտ միայն ուժի ու շահի համաձայն ձևավորել պետությունների քաղաքական գերակայությունները: Ընդհակառակը, Սառը պատերազմից հետո, ըստ Ս.Հանթինգտոնի, պետություններն իրենց շահերը կառուցում են քաղաքակրթական առանձնահատկությունների հաշվառմամբ: «Նրանք (պետությունները- *Խ.Գ.*) համագործակցում և միություններ են կնքում ընդհանուր կամ նման մշակույթ ունեցող երկրների հետ, իսկ հակամարտում են առավել հաճախ օտար մշակույթ ունեցողների հետ» [5, c. 36]: Այդ առումով, նրա առաջ քաշած բազմաքաղաքակրթական պարադիգմը, որը հիմնված է նախորդների վրա, որոշակիորեն թույլ է տալիս համադրել վերոնշյալ մոտեցումները և բացատրել, թե ինչ է կատարվում աշխարհում 20-րդ դարի վերջին: Բազմաքաղաքակրթական պարադիգմի համաձայն, աշխարհի քաղաքական քարտեզը նպատակահարմար է բաժանել ոչ թե երկու (նկատի ունենք

Արևմուտք-Արևելք, Հյուսիս-Հարավ կամ այլ բաժանումներ), կամ երկու հարյուր (ըստ պետական կազմավորումների), այլ ըստ հիմնական քաղաքակրթությունների, որոնց թիվը կարող է տատանվել 7-8-ի շրջանակներում: Ս.Հանթինգտոնը կանխատեսում է ապագայի հակամարտությունների աճ: Ըստ վիճակագրության՝ միայն 1993թ. ամբողջ աշխարհում ընթանում էր ավելի քան 48 էթնիկական հակամարտություն, միայն նախկին ԽՍՀՄ տարածքում առկա էին սահմանների հետ կապված շուրջ 164 էթնոտարածքային հավակնություններ, որոնցից 30-ը հանգեցրել էր զինված բախումների [5, c. 38]: Ընդ որում, ինչպես նշում է Ս.Հանթինգտոնը, այդ 48 հակամարտությունների կեսից ավելին ընթանում էր տարբեր քաղաքակրթությունների ներկայացուցիչների միջև, որը ևս մեկ ապացույց էր նրա առաջ քաշած բազմաքաղաքակրթական մոդելի համաձայն «քաղաքակրթությունների բախման» պարադիգմի հիմնավորման համար: Մյուս առանցքային թեզը, որի շուրջ ամերիկացի գիտնականը կառուցում է իր հայեցակարգը, վերաբերում է քաղաքակրթությունների բախման հնարավոր գոտիներին, որոնք, ըստ նրա, հիմնականում ընթանալու են «խզվածքների» երկայնքով, որտեղ քաղաքակրթությունները հատվում են միմյանց [5, c. 41]: Այս դեպքում միջքաղաքակրթական բախումները կընթանան երկու մակարդակում: Առաջին՝ տեղային կամ միկրոմակարդակում կարող են բախումներ արձանագրվել «խզվածքների» երկայնքով՝ հարևան պետությունների միջև, որոնք պատկանում են տարբեր քաղաքակրթությունների և, երկրորդ մակարդակում ավելի զլոբալ հակամարտությունները կարող են ընթանալ քաղաքակրթությունների առանցք հանդիսացող մեծ պետությունների միջև [5, c. 324]:

Եթե փորձենք ընդհանրացնել Ս.Հանթինգտոնի առաջ քաշած բազմաքաղաքակրթական պարադիգմի ու «քաղաքակրթությունների բախման» հայեցակարգի հիմնական ուղերձները, ապա պետք է

արձանագրենք, որ, մեծ հաշվով, ինչպես Ֆ.Ֆուկույամայի, այնպես էլ Ս.Հանթինգտոնի հայեցակարգերը կառուցված են ամերիկյան հեգեմոնիայի հիմնավորման կամ առնվազն որքան հնարավոր է երկարաժամկետ կտրվածքով նրա պահպանման թեզի վրա:

Սակայն, եթե Ֆ.Ֆուկույաման պնդում է Արևմուտքի ունիվերսալության դրույթը, ապա Ս.Հանթինգտոնն առաջ է քաշում Արևմուտքի ունիվերսալության թեզը՝ համարելով, որ քաղաքակրթական զարգացումների ներկա միտումների պայմաններում լավագույնը, որ կարող է անել ԱՄՆ-ը՝ արևմտյան աշխարհի մնացած պետությունների հետ միասին, սեփական քաղաքակրթական ինքնության ու ինքնատիպության պահպանումն է, այլ ոչ թե դրա արհեստական տարածումն ամբողջ աշխարհով: Այսպիսով, ըստ Ս.Հանթինգտոնի, Արևմուտքը ոչ թե ունիվերսալ (ինչպես կարծում էր Ֆ.Ֆուկույաման), այլ ունիվերսալ քաղաքակրթություն է, որի հիմնական խնդիրը բազմաքաղաքակրթական պարադիգմի համաձայն սեփական ինքնության պահպանումն է:

Բնական է, ամերիկյան հեղինակների՝ իրենց քաղաքակրթական ինքնության պահպանման ու գերակայության ապահովման ձգտումը որոշակի իմաստով հասկանալի մոտեցում է, քանի որ, ըստ էության, յուրաքանչյուր երկրի հասարակական-քաղաքական միտքը, նախևառաջ, կոչված է սպասարկելու իր պետության ազգային-պետական շահերն ու մատնանշել սեփական պետության կենսունակության ապահովման ուղիները, ինչում ամերիկյան քաղաքագիտական դպրոցը, թերևս, իրեն հավասարը չունի:

Սակայն ամերիկյան քաղաքագիտական դպրոցի մշակած պարադիգմերը, որքան էլ որ լայն տարածում գտան, այնուամենայնիվ, միակը չէին, և շատ արագ կերպով այլ քաղաքագիտական (նաև քաղաքակրթական) կենտրոններում ձևավորվեցին նոր պարադիգմեր:

Արդեն 20-րդ դարի 90-ականների վերջին սկզբում քաղաքական, իսկ այնուհետև՝ նաև քաղաքագիտական շրջանակներում առաջ

քաշվեց «քաղաքակրթությունների երկխոսության» պարադիգմը: Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մ.Խաթամին հանդես եկավ քաղաքակրթությունների երկխոսության նախաձեռնությամբ՝ առաջարկելով այս պարադիգմը որպես միջազգային հարաբերությունների նոր որակի անցման գլխավոր գործոն-հրամայական: ՄԱԿ Գլխավոր վեհաժողովում իր հայտնի ելույթում Իրանի նախագահը, անդրադառնալով այդ թեմային, նշեց, որ մարդկության պատմության 20-րդ հարյուրամյակի նշանակալի նվաճումներից մեկը պետք է լինի երկխոսության անհրաժեշտության ու կարևորության ընդունումը: «Շփման ճիշտ ձևերի հաստատումն ու զարգացումը, լինի ազգային, թե միջազգային մակարդակում, կախված են տարբեր նախապատվություններ, հայացքներ ու մոտեցումներ ունեցող հասարակությունների ու քաղաքակրթությունների երկխոսությունից: Եթե մարդկությունը նոր դարի ու հազարամյակի շեմին իր բոլոր ջանքերն ուղղի երկխոսության ուղղությամբ՝ փոխարինելով թշնամանքն ու բախումայնությունը քննարկումներով ու ըմբռնմամբ, ապա անգնահատելի ժառանգություն կթողնի ապագա սերունդներին» [6]: Եվ որպես քաղաքակրթությունների միջև երկխոսությանն ուղղված առաջին քայլ՝ Իրանի նախագահի առաջարկով ՄԱԿ-ը միաձայն ընդունեց բանաձև, որում, մասնավորապես, ողջունելով միջազգային հանրության կողեկտիվ ջանքերը երրորդ հազարամյակի նախաշեմին քաղաքակրթությունների միջև կառուցողական երկխոսության միջոցով փոխըմբռնման հասնելու ուղղությամբ, 2001 թվականը հռչակվում է քաղաքակրթությունների երկխոսության տարի [7]: Դրանից հետո ՄԱԿ գլխավոր քարտուղար Ք.Անանի հանձնարարությամբ ստեղծվեց քաղաքական գործիչներից ու գիտնականներից կազմված բազմազգ մի խումբ, որը պետք է զեկույց պատրաստեր վերոնշյալ հիմնախնդրի վերաբերյալ: Արդյունքում՝ ՄԱԿ 56-րդ նստաշրջանում ընդունվեց «Քաղաքակրթությունների միջև երկխոս-

սության գլոբալ օրակարգ» անվանումը կրող բանաձևը, որն էլ, ըստ նախագծի գաղափարախոսության, պետք է կանխորոշեր 21-րդ դարում մարդկության զարգացման հիմնական ուղենիշները [8]:

Եթե վերլուծելու լինենք ոչ վաղ անցյալի միջազգային իրադարձությունները, ցավով պետք է արձանագրենք, որ 2001 թվականը, չնայած միջազգային հանրության հռչակած «քաղաքակրթությունների երկխոսության» գերակա սկզբունքին, ավելի շատ աչքի ընկավ «քաղաքակրթությունների բախմամբ», քան երկխոսությամբ: Հատկապես 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչություններից հետո, երբ ԱՄՆ-ը պատերազմ հայտարարեց միջազգային ահաբեկչությանն ու լայնածավալ ռազմական գործողություններ սկսեց աշխարհով մեկ, հասարակական-քաղաքական դիսկուրսում նոր թափ առան «քաղաքակրթությունների բախման» հանթինգտոնյան ավանդույթները:

Երկխոսության պարադիգմերն ու քաղաքական երկխոսութաբանության արդիականությունը

Վերը խոսվեց երկխոսության հիմնախնդրին նվիրված ավելի շատ քաղաքական, քան քաղաքագիտական նախաձեռնությունների մասին: Սակայն հարկ է նշել, որ քաղաքականությունն առանց գիտական լուրջ հիմնավորումների մակերեսային և ոչ մի տեղ տանող ուղի է, ու եթե պետությունների իրական քաղաքական նպատակների և ռազմավարությունների մեջ տեղ է հատկացվում քաղաքական և քաղաքակրթական երկխոսությանը, ապա այն անպայմանորեն պետք է ունենա համապատասխան գիտական աջակցություն: Իհարկե, մեծ հաշվով բոլոր ժամանակներում էլ նկատվել է քաղաքական-տեսականի և քաղաքական-գործնականի ներքին հակադրություն, և ոչ բոլոր դեպքերում է, որ իշխանությունների վարած քաղաքականությունը համապատասխանում է տվյալ ժամանակաշրջանի կամ իրավիճակի տեսական իմաստավորումներին: Սակայն այս դեպքում տեղին է ևս մեկ անգամ հիշել, որ պետության քաղաքական զարգաց-

ման երկարաժամկետ ռազմավարությունները հնարավոր է կյանքի կոչել միայն համապատասխան գիտական մշակումների և հիմնավորումների պարագայում: Այդ պատճառով, վաղ թե ուշ, պետությունն ու քաղաքականությունն իրականացնող հիմնական կենտրոնները ձևավորում են համապատասխան պահանջարկ՝ հասարակության սոցիալ-քաղաքական կյանքի զարգացման տարբեր ուղիների և ոլորտների գիտականորեն հիմնավորված ռազմավարությունների մշակման համար: Այս տեսանկյունից, թերևս, երկխոսության հիմնախնդրին նվիրված պարադիգմերն այսօր հասարակական-քաղաքական դիսկուրսում ամենապահանջվածներից են:

Վերջին ժամանակներս, հատկապես 21-րդ դարի առաջին տասնամյակում ու դրանից հետո ընկած ժամանակահատվածում սոցիալական գիտությունների և, մասնավորապես, քաղաքագիտության շրջանակներում նկատելի է երկխոսության պրոբլեմատիկային նվիրված ուսումնասիրությունների ակտիվացում, որը կարելի է բացատրել մի շարք հանգամանքներով: Առաջինը, նախևառաջ, պայմանավորված է քաղաքականության գլոբալ դրսևորումներով և քաղաքակրթությունների միջև երկխոսության անհրաժեշտության հրամայականով, որպես քաղաքակրթությունների համատեղ, խաղաղ գոյակցության և մարդկության ողջ մշակութային բազմազանության պահպանման կարևոր գրավական: Այդ առումով, ինչպես արդեն նշվել է, քաղաքակրթությունների երկխոսության հիմնախնդիրը դարձել է ինչպես հասարակական-քաղաքական գործիչների, այնպես էլ գիտական և ակադեմիական շրջանակների «թեժ քննարկման» առարկա [9]: Նման քննարկումները, ինչպես դիպուկ բնորոշում է Վ.Մեծունը, ներկայումս վերածվել են «երկխոսության մասին համերկրային երկխոսության» յուրատեսակ ձևի [10, c. 11]:

Երկխոսության հիմնախնդրին նվիրված ուսումնասիրությունների երկրորդ ուղղությունն ընդգրկում է միջպետական փոխհարա-

բերությունների համակարգն ու տարածաշրջանացմամբ պայմանավորված նոր երկխոսության հարթակների ձևավորման գործընթացների ուսումնասիրությունը: Այդ համատեքստում տարածաշրջանային բոլոր կառույցներն ու կազմակերպությունները կարելի է դիտարկել որպես երկխոսության *sui generis* հարթակներ, որպես պետությունների միջև մշտապես ընթացող քաղաքական երկխոսության ինստիտուցիոնալացված դրսևորումներ: Այդ առումով ավելորդ է խոսել ԵԱՀԿ-ի, ԵԽՄԿ-ի, ԵվրԱզԷս-ի, Շանհայի համագործակցության կազմակերպության (*ШОС*), *NAFTA*-ի, ՄՏՀԿ-ի (*ОԿԵС*) և նմանատիպ այլ տարածաշրջանային միջպետական կազմակերպությունների կառուցողական դերակատարման մասին՝ որպես պետությունների միջև քաղաքական, տնտեսական, մշակութային ոլորտներում երկխոսության հաստատման և տարածաշրջանային նշանակության հիմնախնդիրների քննարկման ու լուծման կարևորագույն հարթակներ:

Եվ վերջապես, երկխոսության հիմնախնդրի ուսումնասիրման երրորդ ուղղությունը ներառում է պետության ներքաղաքական ոլորտին առնչվող այնպիսի հիմնահարցերի քննարկումը, ինչպիսիք են երկխոսության կառուցակարգերի կիրառումն իշխանությունընդդիմություն փոխհարաբերությունների կարգավորման համատեքստում, ժողովրդավարության համախմբման (կոնսոլիդացիայի) գործընթացում քաղաքական երկխոսության մշակույթի դերակատարման, հասարակական-քաղաքական երկխոսության կամ Հաբերմասի բնորոշմամբ՝ «դիսկուրսային պրակտիկաների» [11] ուսումնասիրումը, երկխոսության՝ որպես «դելիբերատիվ ժողովրդավարության» մոդելի գործնական դրսևորման և այլ խնդիրներ: Այս ուղղությամբ տարվող հետազոտություններից արժանահիշատակ են ինչպես Յու.Հաբերմասի [11], այնպես էլ Ս.Էսքուիթի [12, p. 9-25], Ա.Էտցիոնիի [13], Դ.Քոտչի [14, p. 93-117], Ռ.Դալի [15], Ֆորեսթերի [16, p. 295-335], Վ.Պոցելուսի [17] և այլոց հիմնարար աշխատանքները:

Ընդհանրապես, հիմնահարցով զբաղվող մասնագետներից շատերն են բարձրաձայնում երկխոսության նոր տեսության ձևավորման անհրաժեշտության մասին: Արդեն կան մի քանի փորձեր այդ նոր գիտական ուղղության անվանման, ինչպես նաև առարկայական դաշտի հստակեցման հետ կապված: Դեռ 2006թ. ռուսաստանցի քաղաքագետներից Ա.Ախիեզերն էր նշում նոր տեսության անհրաժեշտության մասին, որն ունակ կլինի ինչ-որ կերպ «շոշափել» հասարակության մեջ երկխոսության տեղն ու դերը, բացահայտել երկխոսության դրսևորման բազմաթիվ ձևերի կապը երկխոսությային տեխնոլոգիաների հնարավոր զարգացման հեռանկարների հետ [18, c. 39]: Վ.Պոցելուևը, որին կարելի է համարել քաղաքական երկխոսության հիմնախնդրով զբաղվող ռուսական քաղաքագիտական դպրոցի խոշոր մասնագետներից մեկը, նույնպես նշում է, որ «անհրաժեշտ է քաղաքական երկխոսության նոր, հատուկ տեսություն, որը կկարողանա քննադատաբար վերլուծել ու սինթեզել արդեն գոյություն ունեցող հայեցակարգերն ու տեսությունները, որոնք արտացոլում են ժամանակակից հասարակության քաղաքական պրակտիկայում առկա երկխոսությային փոխհարաբերությունները» [19, c. 5]: Իհարկե, հեղինակը բավական հոռետեսորեն է մոտենում մոտ ապագայում նման տեսության ի հայտ գալու հավանականության հարցին, այդ պատճառով, ըստ նրա, առանձնահատուկ արդիական են դառնում այդ ուղղությամբ տարվող տեսական-մեթոդաբանական բնույթի «հետախուզական» աշխատանքները, որոնք թույլ են տալիս իմաստավորել նոր տեսության պարադիգմալ հիմքերը, մշակել համարժեք մեթոդաբանական մոդելներ, հստակեցնել ու զարգացնել համապատասխան հասկացությային ապարատը [19, c. 5]:

Թերևս, կարելի է չհամաձայնել այս դիտարկման հետ, քանի որ այդ տեսանկյունից, նոր գիտակարգի կամ նոր պարադիգմի «հասունացման» հեռանկարն այնքան էլ հեռավոր ու մշուշոտ չէ, ավելին՝

այսօր արդեն կարելի է խոսել այդ նոր պարադիգմի՝ «քաղաքական երկխոսութաբանության» առարկայական և պրոբլեմային դաշտի որոշակի հստակեցման մասին: Նախ նշենք, որ առանձին գիտաճյուղերի շրջանակներում արդեն կան բազային համարվող որոշակի հետազոտություններ, ինչպիսիք են մշակութաբանական մոտեցման բախտինյան մեկնությունը, փիլիսոփայական կտրվածքով Բիբլերի, սոցիոլոգիական իմաստով Հաբերմասի «դիալոգիկան», Է.Կոչետովի առաջ քաշած հումանիտար կոսմոլոգիայի բարձրակետ համարվող «դիալոգիստիկան»: Վերոնշյալ տեսություններից յուրաքանչյուրն, անշուշտ, համաշխարհային հասարակական-քաղաքական մտքի համատեքստում ունի անժխտելի իմացաբանական և գոյաբանական արժեք, որոնց վրա էլ կառուցվում է մեր առաջ քաշած պարադիգմը՝ «քաղաքական երկխոսութաբանությունը»:

Երկխոսության հիմնախնդրի վերաբերյալ Մ.Բախտինի առաջ քաշած մոտեցումները քաղաքական երկխոսութաբանության համատեքստում, նախևառաջ, կարող են կիրառվել որպես գիտական հետազոտության, հատկապես հումանիտար ոլորտում տարվող ուսումնասիրությունների յուրահատուկ մեթոդաբանություն:

Համաձայն Գ.Դյակոնովի՝ բախտինյան երկխոսության մեթոդաբանությունն այն ունիվերսալ և ստեղծարար մոտեցումն է, այն ֆենոմենոլոգիական-իմաստային տեսանկյունը, որի դիրքերից բացահայտվում են գիտության հիմնարար խնդիրներն ու հակասությունները, հաղթահարվում են նեղ գիտակարգային բնույթ ունեցող փակուղիներն ու մոլորությունները, ցրվում են գիտական հայացքներում արմատացած կարծրատիպերն ու միֆերը [20]:

Մեր կարծիքով՝ քաղաքական երկխոսութաբանության համատեքստում բախտինյան երկխոսության մեթոդաբանությունը կարող է լիովին կիրառվել քաղաքականության՝ որպես «սուբյեկտ-սուբյեկտ» փոխհարաբերությունների համակարգի ընկալման, նոր դասականու-

թյան քաղաքական հայեցակարգի հիմնավորման, *քաղաքական երկ-
խոսութաբանության հիմնական պրոբլեմի` HOMO DIALOGUS-ի գո-
յաբանական ու իմացաբանական շերտերի բացահայտման համար:*

Ինչ վերաբերում է Վ.Բիբլերի երկխոսության տեսությանը, կամ ավելի ճիշտ կլինի ասել` «տրամաբանությունների երկխոսության տե-
սությունը»¹, ապա այն հեղինակն առավելապես զարգացնում է փիլի-
սոփայական մտածողության համատեքստում` դիալոգիկան դիտար-
կելով որպես 21-րդ դարի նոր մտածողությանը բնորոշ ֆենոմեն: Ի
տարբերություն Մ.Բախտինի, ըստ որի` գիտակցությունն ունի երկխո-
սությամբ բնույթ, Վ.Բիբլերը կարծում է, որ մարդկային մտածողու-
թյունն է դրսևորում երկխոսությամբ տեսք, որտեղ երկխոսությունը
դառնում է մտածողության ձև, տրամաբանություն, քանի որ, ըստ
Վ.Բիբլերի, տրամաբանություն կա այնտեղ, որտեղ կա տրամաբա-
նությունների, բանականությունների երկխոսություն [21, c. 122]: Բացի
այդ, Վ.Բիբլերը հենց «երկխոսություն» հասկացությունն է օգտագոր-
ծում առանձնահատուկ կերպով` ներկայացնելով այն որպես մտածո-
ղության սահմանում: «Մարդ մտածում է այն ժամանակ, երբ, թեկուզև
լռելյայն, զրուցում է ինքն իր հետ» [22]: 21-րդ դարի նախաշեմին Վ.Բիբ-
լերն առաջ է քաշում նոր էպոխայի կամ դարաշրջանի մտածողության
տրամաբանության փոփոխության անհրաժեշտության հարցը, և ահա
այստեղ է, որ Նոր ժամանակաշրջանի ռացիոնալ տրամաբանությանը
փոխարինելու է գալիս դիալոգիկան` տարբեր տրամաբանությունների
երկխոսությունը, որն ունակ է համատեղել տարբեր տրամաբանու-
թյուններ, ի վերջո` տարբեր մշակույթներ ու արժեքային համակարգեր:
Ամեն դեպքում, բիբլերյան «դիալոգիկան» ավելի շատ վերաբերում է
տրամաբանության երկխոսությանը, քան երկխոսության տրամաբա-
նությանը: Իսկ այն գաղափարը, որ 21-րդ դարին անհրաժեշտ է նոր
տրամաբանություն, նոր մտածողություն, լիովին ընդունելի կարելի է

¹ «Դիալոգիկան» Վ.Բիբլերն այդ իմաստով էլ մեկնաբանում է` որպես տրամաբանու-
թյունների երկխոսություն:

համարել ոչ միայն փիլիսոփայական մտահայեցողության, այլ, նախ-
նառաջ, քաղաքական իրականության համար: Պետք է ընդունել այսօր
քաղաքականության առաջնայնությունը մարդու բնականոն կենսա-
գործունեության ապահովման հարցում, իսկ ներկայիս քաղաքական
որոշում ընդունողներն ամենևին էլ փիլիսոփայական մտքի կրողներ
չեն, ընդհակառակը, Հ.Շաքարյանի դիպուկ բնորոշմամբ՝ գիտական
մտածողությանը հայտնի հանդուրժողականության սկզբունքը տեղը
զիջել է անհաղորժող, բայց արդեն իրավաստեղծ իշխանությամբ օժտ-
ված ինքնագոհ ու ինքնաբավ ողջախոհությանը [23, էջ 9]: Եվ այսօր քա-
ղաքական ռեալիզմի ու գերգործնապաշտ անհատապաշտության
հիման վրա կառուցված քաղաքականությունն ու քաղաքական գործիչ-
ների մի ամբողջ սերունդ, թերևս, ավելի շատ կարիք ունեն երկխոսու-
թային մտածողության ձևավորման, որին էլ նպատակաուղղված է
քաղաքական երկխոսութաբանությունը:

Յու.Հաբերմասի «դիալոգիկան» բնույթով սոցիալ-փիլիսոփայա-
կան լինելով՝ միաժամանակ, ավելի մոտ է քաղաքագիտական հետա-
զոտության պրոբլեմատիկային, քանի որ Հաբերմասի ուշադրության
կենտրոնում ոչ թե մարդ-սուրբեկտն է ընդհանրապես, այլ սոցիալ-
քաղաքական որոշակի ակտիվություն ցուցաբերող անհատը: Հարկ է
նշել, որ անձամբ Յու.Հաբերմասը «դիալոգիկա» եզրույթը չի օգտագոր-
ծում, ուղղակի որոշ հետազոտողներ, հաշվի առնելով նրա առաջ քա-
շած «կոմունիկատիվ գործողության» տեսության համընդգրկուն երկ-
խոսութային բնույթը, այն անվանում են նաև «դիալոգիկա» [24]: Այս
տեսանկյունից հաբերմասյան «դիալոգիկայի» հիմնական առանձնա-
հատկությունն, անշուշտ, կարելի է համարել նրա վառ արտա-
հայտված հաղորդակցային բնույթը, երկխոսութային հաղորդակցու-
թյան տեխնոլոգիաների բացահայտումն ու սոցիալ-քաղաքական
պրակտիկայում դրանց ներդրման անհրաժեշտության հիմնավորումը:
Յու.Հաբերմասի համար երկխոսությունն անհատների ազատ փոխհա-

րաբերությունների համակարգ է, որտեղ մարդու անհատականությունը ոչ թե ճնշվում, այլ, ընդհակառակը, դրսևորվում է իր ողջ հարստության մեջ: Միաժամանակ, այդպիսի հաղորդակցության ժամանակ անձը բավարարում է շփվելու, սեփական տեսակետները, արժեքային պատկերացումները, զգացողություններն ազատ արտահայտելու կենսական պահանջումնքը, որոնք այլ կերպ հնարավոր չէ փոխանցել: Նման հաղորդակցությունը ենթադրում է որոշակի հաղորդակցական վարքագիծ, շփման և երկխոսության մշակույթ, որը Հաբերմասն անվանում է «դիսկուրսի էթիկա» [25, c. 1-2]: Բնականաբար, հաղորդակցության նման մոդելը հնարավոր է գործի դնել միայն երկխոսության ռեժիմում՝ բանակցային գործընթացների ու համաձայնողական այլ տեխնոլոգիաների լայն կիրառման շնորհիվ: Իսկ այն նախապայմանների ամբողջությունը, որոնց շնորհիվ բանակցությունների ընթացքում իրականանում է «հաղորդակցական համաձայնությունը» (*communicative consensus*), Հաբերմասը կոչում է «դիսկուրսի էթիկա» [24, c. 73]: Հետագայում արդեն «դիսկուրսի էթիկայի» հիման վրա Հաբերմասը ձևավորում է քաղաքականության ընկալման և ժողովրդավարական կառավարման նոր մոդելը՝ երկխոսությային քաղաքականությունն ու խորհրդակցական (դելիբերատիվ) ժողովրդավարության տեսությունը: Հաբերմասի տեսական ու գործնական նշանակության հարցադրումներին, հատկապես քաղաքական երկխոսության ու, ընդհանրապես, քաղաքականության՝ որպես երկխոսությային քաղաքական հաղորդակցման ընկալման հիմնական տեսանկյուններին դեռ կանդրադառնանք, իսկ ինչ վերաբերում է քաղաքական երկխոսութաբանության ինդրային դաշտի ձևավորմանը, ապա պետք է նշել, որ Յու.Հաբերմասի «հաղորդակցային գործողության» տեսությունը, նախևառաջ, օգնում է բացահայտելու քաղաքական երկխոսության կոմունիկացիոն ասպեկտներն ու իրական քաղաքականության մեջ դրանց կիրառման առանձնահատկությունները:

Նոր գիտակարգի՝ քաղաքական երկխոսութաբանության խնդրային ու առարկայական դաշտի ձևավորմանը մեծապես կարող է նպաստել նաև ռուսական հասարակագիտական մտքի ժամանակակից ներկայացուցիչներից Է.Կոչետովի առաջ քաշած «դիալոգիստիկայի» տեսությունը, որն ավելի շատ հավակնում է հանդես գալ որպես հումանիտար գիտելիքի ձեռքբերման որակապես նոր բնագավառ: Ինչպես Է.Կոչետովն է նշում, արդի ժամանակաշրջանի հիմնարար հարցադրումներից մեկը վերաբերում է համերկրային, գլոբալ փոխակերպումների դարաշրջանում մարդու և աշխարհի ճակատագրում երկխոսության տեղին ու դերին [26, c. 23]: Այդ համատեքստում երկխոսութաբանությունը վերածվում է հասարակագիտության բնագավառում նոր գիտելիքի ձեռքբերման աղբյուրի, իսկ երկխոսության մասին քննարկումները տեղափոխվում են նոր գիտական հարթակներ [26, c. 23]: Փորձելով սահմանել երկխոսութաբանությունը որպես առանձին գիտաճյուղ՝ Է.Կոչետովը տալիս է ընդհանուր և համընդգրկուն բնութագրումներ: Մասնավորապես, ըստ նրա՝ «Դիալոգիստիկան հումանիտար գիտելիքի նոր բնագավառ է, գիտություն գլոբալ փոխակերպումների պայմաններում փոխադարձ և համաձայնեցված աշխարհընկալման տեսական և մեթոդաբանական հիմքերի մասին, միջքաղաքակրթական երկխոսության նոր հորիզոններ դուրս գալու գիտություն՝ որպես աշխարհի ներդաշնակեցման հիմնարար սկիզբ, գլոբալ քաղաքակրթական կայունության հաստատման ու լարվածության թոթափման հումանիտար բարձր տեխնոլոգիաների կիրառման արվեստ, արդիականության գլոբալ հիմնախնդիրների վերաբերյալ որոշումների ընդունման նոր սկզբունքների ամբողջություն» [26, c. 77]: Ինչպես երևում է սահմանումից, կամ ավելի ճիշտ՝ սահմանումներից, երկխոսութաբանության խնդրային և առարկայական ընդգրկման շրջանակը շատ լայն է: Ինքը՝ Է.Կոչետովը դա նույնպես գիտակցում է, այդ պատճառով հատուկ առանձնացնում է երկխոսութաբանության «իմաստային միջու-

կը», սուբստանցիան, այն է՝ գլոբալ փոխակերպումների պայմաններում փոխադարձ և համաձայնեցված աշխարհընկալումը: Ըստ ռուս հեղինակի, նոր գիտակարգի առանձնահատկություններից էլնելով՝ նրա մեթոդաբանական հենքը կարող են կազմել գեոգենեզիսի և սիներգետիկական հետազոտության մեթոդները, քանի որ այդ մեթոդաբանական մոտեցումներն առավել համարժեք կերպով են թույլ տալիս հասկանալ այն զսպանակը, որն ունակ է երկխոսության գործընթացում ազատ արձակել իմաստային մտքերի հսկայական էներգիա և երկխոսող կողմերի մոտ ձևավորել դրական որոշումների փնտրտուքի և լուծման ձգտում [26, c. 79]:

Ինչ վերաբերում է երկխոսութաբանության խնդրային և առարկայական դաշտին, ապա Է.Կոչետովը երկխոսութաբանության առարկան սահմանում է ընհանրական կերպով՝ համաշխարհային խնդիրների շրջանակն ամբողջությամբ ներառելով երկխոսութաբանության առարկայի մեջ [26, c. 79]: Իսկ երկխոսութաբանության խնդրային դաշտի մեջ ներառվում են այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են՝ ա) երկխոսության ատրիբուտները, բ) համաշխարհային հիմնախնդիրների համայնապատկերն ու դրանց պայմանական արտացոլումը, գ) միջազգային, տարածաշրջանային և ազգային ֆորումների, գիտաժողովների և կլոր սեղանների օրակարգերում ընդգրկված զանազան խնդիրները և այլն [26, c. 79]:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ինչու, այնուամենայնիվ, երկխոսութաբանությունն ավելի նպատակահարմար է դիտարկել քաղաքագիտական, այլ ոչ թե փիլիսոփայական հարթության մեջ, ու, դրանից էլնելով՝ խոսել ոչ թե երկխոսութաբանության ընդհանրապես, այլ քաղաքական երկխոսութաբանության խնդրային ու առարկայական դաշտի ձևավորման մասին:

Նախևառաջ, ինչպես երևում է երկխոսութաբանության Կոչետովյան սահմանումից, խնդրային և առարկայական դաշտի հստակեցման փորձերից, ապա կարելի է արձանագրել, որ դրանք փիլիսո-

փայական մակարդակի, համընդգրկուն և համապարփակ ներկայանալու հայտ են ներկայացնում, շոշափում են հումանիտար տիեզերաբանության շերտերը, հիմնականում ներառում են համերկրային (գլոբալ) երկխոսության թեմատիկան, այդ պատճառով էլ, միգուցե, դառնում են խիստ վերացական և կորցնում են իրենց կիրառական նշանակությունը: Այն դիտակետը, որն ընտրում է Է.Կոչետովը հիմնահարցի ուսումնասիրման համար, ինչպես ինքն է նշում, հումանիտար տիեզերաբանության մեթոդաբանական ուղեծիրն է: Եթե փորձենք իյուստրատիվ կերպով հասկանալ երկխոսութաբանության Կոչետովյան մասշտաբները, ապա այն առնվազն կարելի է համեմատել տիեզերական բարձունքներից երկրագնդին հառնող հայացքի հետ: Ամեն ինչ թվում է փոքր չափերի մեջ այն աստիճան, որ կարելի է ավի մեջ առնել «համաշխարհային երկխոսության» ողջ խնդրային դաշտը, երկրագունդն «առնել ավի մեջ», բոլորին նստեցնել երկխոսության մեծ սեղանի շուրջ և մի շնչով լուծել մարդկությանը հուզող հազարամյա խնդիրները: Միաժամանակ, եթե այդ ուղեծրից նայենք հիմնահարցին, կզգանք այն իրական հեռավորությունը, որը բաժանում է տիեզերագնացին (այս դեպքում հետազոտողին) իր բնօրրանից՝ Երկիր մոլորակից (կամ այլ կերպ ասած՝ հետազոտության օբյեկտից): Մոտավորապես այդպես է նաև երկխոսութաբանության Կոչետովյան ընկալման փիլիսոփայական-տիեզերաբանական աշխարհայացքը: Մինչդեռ, երկխոսության հիմնահարցը քաղաքագիտության դաշտ տեղափոխելով՝ հնարավորություն է ստեղծվում երկխոսության մասին գիտելիքներն ու տեսական ձեռքբերումներն օգտագործել գործնական քաղաքականության ոլորտում՝ կոնկրետ քաղաքական նպատակների և քաղաքականության ոլորտում առկա կոնֆլիկտների ու վիճահարույց հարցերի լուծման համար:

Երկրորդ հիմնավորումը, որը խոսում է քաղաքական երկխոսութաբանության արդիականության օգտին, վերաբերում է նրան,

որ «երկխոսության մասին երկխոսությունից», այսինքն՝ զուտ տեսական-հայեցակարգային դատողություններից, զուտ խոսակցություններից շուտափույթ պետք է անցում կատարել գործնական հարցադրումների, այսինքն՝ դիտարկել «երկխոսությունը գործողության մեջ»: Այդ տեսանկյունից առավել արդիական է դառնում այնպիսի հիմնահարցերի ուսումնասիրությունը, ինչպիսիք են քաղաքական երկխոսության հաղորդակցական, տեխնոլոգիական առանձնահատկությունների բացահայտումը, երկխոսության գործընթացային և ընթացակարգային կողմերի շեշտադրումները: Այս հիմնահարցերը, մեր կարծիքով, լավագույնս կարող են լուսաբանվել հենց քաղաքական երկխոսութաբանության համատեքստում:

Հաջորդ փաստարկ-հիմնավորումը վերաբերում է հասարակության քաղաքական ինքնակազմակերպման և կառավարման նոր մոտեցումների ու տիպոթիանակների ներդրման անհրաժեշտությանը: Փաստ է, որ տեղեկատվական, հաղորդակցական հասարակության ձևավորմանը զուգահեռ, փոխվում են նաև մարդկանց քաղաքական ինքնակազմակերպման և կառավարման ձևերն ու սկզբունքները, վերանայվում են իշխանության իրականացման ավանդական մեխանիզմներն ու պատկերացումները, մենախոսային հաղորդակցական տեխնոլոգիաներին փոխարինելու են գալիս երկխոսությային քաղաքական հաղորդակցման կառուցակարգերը, ժողովրդավարական բարեփոխումների գործընթացում աստիճանաբար կարևորվում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են ժողովրդավարության համախմբման գործում քաղաքական երկխոսության մշակույթի ունեցած դերակատարումը, ժողովրդավարության նոր մոդելների՝ կոմունիկատիվ, խորհրդակցական (դելիբերատիվ) ժողովրդավարության աճող նշանակությունը հասարակության քաղաքական կառավարման մոդելների շարքում: Բնականաբար, սրանք հարցադրումներ են, որոնք կարող են ուղղակի մաս կազմել քաղաքական երկխոսութաբանության

խնդրային և առարկայական դաշտի հստակեցման համար՝ դառնալով այս նոր գիտակարգի ուսումնասիրման առարկայական հենքը:

Եվ վերջապես, հումանիտար գիտությունների պրոբլեմատիկայում նկատվող անթրոպոլոգիական շեշտադրումներն էլ ավելի են կարևորում մարդակենտրոն պարադիգմերի նշանակությունը, և այստեղ է, որ քաղաքական երկխոսութաբանությունը շահեկանորեն առանձնանում է իր ուսումնասիրման հիմնական խնդրով, այն է՝ «*HOMO DIALOGUS*»-ի ձևավորումը՝ որպես նոր դարաշրջանի ֆենոմեն, ի հակակշիռ նախորդ հարյուրամյակում գերիշխող «*HOMO CONFLICTUS*»-ի: Անկասկած է, որ երկխոսության հիմնական սուբյեկտը մարդն է, և այդ տեսանկյունից արդյունավետ հասարակական-քաղաքական երկխոսությունների կազմակերպման գործում, նախևառաջ, առաջնային նշանակություն ունի այդ գործընթացի անմիջական մասնակիցների մոտ երկխոսությանի մտածողության, համապատասխան ինտելեկտուալ կարողությունների և գործնական հմտությունների ձևավորումը, որին էլ կոչված է լինելու քաղաքական գիտելիքի ձեռքբերման նոր բնագավառը՝ քաղաքական երկխոսութաբանությունը:

Մի բան ակնհայտ է, մարդկային հասարակությունը գտնվում է ակտիվ վերափոխման փուլում, և ինչպես բոլոր պատմական ժամանակաշրջաններում, այդպես էլ ներկայում, անհրաժեշտ են նոր տեսական հայեցակարգեր, նոր պարադիգմեր, որոնք ցույց կտան հետագա ճանապարհը, մարդկանց համատեղ ապրելու և արարելու ապագա ուղին, նոր ուղին:

Հոկտեմբեր, 2013թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Соколов Б., XX век в зеркале военных демографических катастроф //Тайны Второй мировой: Сб. статей, М., Вече, 2001.*
2. *Блищенко В., Солнцева М., Региональные конфликты и международное право (первая половина XX-начало XXI века), 2005.*

3. *Галстян Х.С.*, Политическая диалогистика: искусство жить вместе // Россия и мир после мирового кризиса: новые вызовы, новые возможности? Материалы VI Конвента РАМИ, М., 2011.
4. *Фукуяма Ф.*, Конец истории и последний человек, М., 2004.
5. *Хантингтон С.*, Столкновение цивилизаций, М., 2003.
6. Выступление Сейеда Мохаммада Хатами, президента Исламской Республики Иран 21 сентября 1998 года на сессии Генеральной Ассамблеи ООН [[www.http://constitutions.ru.archives/590](http://www.constitutions.ru/archives/590)]
7. A/RES53/22. Год диалога между цивилизациями под эгидой ООН, <http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N98/776/13/PDF/N9877613.pdf?OpenElement>
8. A/RES/56/6 Глобальная повестка дня для диалога между цивилизациями, <http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N01/475/44/PDF/N0147544.pdf?OpenElement>
9. Преодолевая барьеры. Диалог между цивилизациями. Под ред. С.П. Капицы, М., Логос, 2002.
10. *Межуев В.*, Диалог между цивилизациями и Россия // От диалога цивилизации к сотрудничеству и интеграции (Якунин В.И., Сулакшин С.С., Межуев В.М. и др.), М., Научный эксперт, 2006.
11. *Хабермас Ю.*, Вовлечение другого. Очерки политической теории, СПб., 2001.
12. Political Dialogue: Theories and Practices (ed. By Stephen L. Esquith), Amsterdam, Rodopi, 1996.
13. *Этциони А.*, От империи к сообществу: новый подход к международным отношениям / Пер. с англ. под ред. В.Л. Иноземцева, М., Ладомир, 2004.
14. *D. Kotch*, Dialogue: An Essay in the Instrumentalist Tradition. // Political Dialogue: Theories and Practices (ed. By Stephen L. Esquith), Amsterdam, Rodopi, 1996.
15. *Даль Р.*, Демократия и ее критики, М., РОССПЭН, 2003.
16. *J. Forester*, Beyond Dialogue to Transformative Learning: How Deliberative Rituals Encourage Political Judgment in Community Planning Processes. // Political Dialogue: Theories and Practices (ed. By Stephen L. Esquith), Amsterdam, Rodopi, 1996.
17. *Поцелуев С.*, Диалог и квазидиалог в коммуникативных теориях демократии, Ростов-на-Дону, Изд-во СКАГС, 2010:
18. *Ахиезер А.*, Возможен ли диалог цивилизаций? // Диалог культур и цивилизаций (под ред. А. Чубарян), М., Наука, 2006.
19. *Поцелуев С.*, Диалог и парадиалог как формы дискурсивного взаимодействия в политической практике коммуникативного общества // Автореферат диссертации на соискание ученой степени доктора политических наук, Ростов-на-Дону, 2010.
20. *Дьяконов Г.В.*, Концепция диалога М.М. Бахтина как методология научно-гуманитарного мышления и мировоззрения [<http://hpsy.ru/public/x2781.htm>].
21. *Библер В.*, От наукоучения к логике культуры (Два философских введения в двадцать первый век), М., 1991.

22. Библер В., Диалог и диалогика [http://www.bibler.ru/bid_dialog.html]
23. Շիրաշրյան Հր., Պատկաճննտարիզմն իբրև մշակութաբանական երևույթ, Եր., 1995:
24. Зайцев А., Диалогика Юргена Хабермаса: понятие и сущность // Вопросы философии, N 2/2012, http://www.e-notabene.ru/fr/article_148.html
25. Habermas J., Justification and Application: Remarks on Discourse Ethics, (translated by С.Р. Cronin), Third printing, Massachusetts Institute of Technology.
26. Кочетов Э., Диалог: Диалогистика как наука о судьбах человека и мира в контексте глобальных перемен, М., 2011.

ОСНОВНЫЕ ПАРАДИГМЫ МИРОПОРЯДКА ПОСЛЕ ХОЛОДНОЙ ВОЙНЫ И АКТУАЛЬНОСТЬ ПОЛИТИЧЕСКОЙ ДИАЛОГИСТИКИ

Хачик Галстян

Резюме

После окончания Холодной войны и распада Советского Союза в мировом общественно-политическом дискурсе появились новые концепции, прогнозирующие развитие мировой цивилизации и установление нового миропорядка в духе футурологических парадигм. Среди них наиболее актуальными в начале и в середине 90-ых годов XX столетия были концепции американских ученых Ф.Фукуямы и С.Хантингтона, с их нашумевшими идеями о «конце истории» и «столкновения цивилизаций». На смену им уже в начале XXI века пришли «диалогические» парадигмы – как альтернативный взгляд на мировое обустройство и развитие общественно-политических систем.

В данной статье на основе анализа этих парадигм выдвигается идея формирования нового направления в гуманитарной сфере миропознания – политической диалогистики как новой парадигмы в рамках политической науки, призванной способствовать формированию *HOMO DIALOGUS*, как феномена новой эпохи, противостоящего *HOMO CONFLICTUS* – доминирующего образа человека XX века.